ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(Մենդյան 100-ամյակի առթիվ)

Պատմ. գիտ. դոկտոր Կ. Ս. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

«Սոտերս լույս է տեսել առանձին հրատարակությամբ... մի փոքրիկ, սակայն վերին աստիճանի բովանդակալից մենագրական աշխատասիրություն Էջմիածնի հոգևոր ճեմարանի երիտասարդ պատմաբան՝ պ. Աշ. Հովհաննիսյանի... Աշխատասիրությունը նվիրված է XVIII դարի սկզբում հայ-ռուսական քաղաքական մերձեցման երկրորդական, սակայն ոչ նվազ բնորոշ ու հետաքրքրական գործիչներից մեկին, այն է՝ Պետրոս դի Սարդիս Գիլանենցին։

...Երիտասարդ պատմաբանի աշխատասիրության արժանիքներից մեկն էլ պատմական երևույթների մեկնության ռեալիստական մեթոդն է, այլև շարադրության եղանակը՝ պարզ, պայծառ, սեղմ, առանց վատորակ պաթոսի, որով մեր հայրենի պատմաբաններն այնքան հարուստ են։ Այստեղ դուք հետքն անգամ չեք գտնի այն արհեստական քնարերգական շեղումների և հայրենասիրական բացականչությունների, որոնցով այնքան հարուստ են ոչ միայն մեր պատմագրության ինքնուս պոպուլյարիզատորները, այլև ավելի պատրաստված ու սոլիդ ներկայացուցիչները։ Շնորհիվ այդ ամենի պ. Հովհաննիսյանի աշխատասիրությունը, օժտված լինելով գիտական լուրջ ուսումնասիրության արժանիքներով, միաժամանակ մեծապես հետաքրքրական է ոչ միայն մասնագետների սահմանափակ շրջանի համար, այլև ընթերցողների լայն շրջանակների համար, որոնք մեր ժողովրդի պատմական բախտի հանդեպ անտարբեր չեն, որոնք հետաքրքրվում են մեր ժողովրդի ազգային-քաղաքական ձգտումներով և նրա հասարակական զարգացումով վերջին երկու դարերի ընթացքում»[1]։

Այս գնահատականը պատկանում է հայ մեծ բանաստեղծ Վահան Տերյանին, որը 1916 թ. «Армянский вестник» ամսագրում (№№ 42 և 43) գրախոսություն է տպագրել Աշոտ Հովհաննիսյանի՝ նույն տարում հրապարակված «Պետրոս դի Սարդիս Գիլանենց (պատմակենսագրական ակնարկ)» գրքի վերաբերյալ։ Բանաստեղծը ճիշտ է նկատել հետազոտողի մեթոդի և ոճի առանձնահատկությունները, որոնց Աշոտ Հովհաննիսյանը հավատարիմ մնաց իր ամբողջ երկարատև գիտական գործունեության ընթացքում։ Ինչ վերաբերում է հայ պատմագրությանը Վահան Տերյանի ներկայացրած պահանջներին, ապա դրանք այժմ էլ մեծ մասամբ չեն կորցրել իրենց հրատապությունը։

Վ. Տերյանի գրախոսած դիրքը պատմաբանի առաջին գիտական աշխատանքը չէր. դեռևս 1913 թ. Մյունխենում գերմաներեն լեզվով հրատարակվել էր նրա „Jsrael Ori und die armenische Befrelungsidee" *(«Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը») գիրքը, որի համար հեղինակը, գերմանական համալսարանների այն ժամանակվա ավանդույթի համաձայն, արժանացել էր փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճանի։ 1914—1915 թթ. «Արարատ» ամսագրում (Էջմիածին) հրատարակվել էին Աշ. Հովհաննիսյանի մի քանի հոդվածներ՝ նվիրված հայ-ռուսական պատմական կապերի տարբեր հարցերի։ Այդ աշխատություններում իր տեղը գտավ այն հիմնական պրոբլեմը, որի հետազոտությանը Աշ. Հովհաննիսյանը նվիրեց իր*

---

[1] Վահան Տերյան. Երկերի ժողովածու. հ. IV, Երևան, 1925, էջ 363, 365։

ամբողջ կյանքը՝ հայ ազատագրական մտքի պատմությունը վաղ միջնադարից մինչև XIX դարի վերջը։ Ունենալով պատմափիլիսոփայական փայլուն կրթություն, յուրացնելով համաշխարհային հայագիտության և ռուսական պատմագրության լավագույն ավանդույթները, կատարելությամբ տիրապետելով մարքս-լենինյան մեթոդաբանությանը, Աշոտ Հովհաննիսյանը հայ իրականության մեջ դարձավ առաջին պրոֆեսիոնալ մարքսիստ պատմաբաններից մեկը։

Աշ. Հովհաննիսյանի աշխարհայացքը ձևավորվել է XIX և XX դարերի սահմանագծում հայ ժողովրդի ճակատագրի համար վճռորոշ դարձած պատմական իրադարձությունների ներգործությամբ։ Նրա մանկական ու պատանեկան տարիները անցել են հայրենի Շուշիում, որը, ինչպես ավելի ուշ նա գրել է, «կովկասահայերի մտավորականության ինքնատիպ հանգույցներից մեկն էր։ Քաղաքը հանգչում էր մանր արտադրողների և առևտրական բուրժուազիայի տնտեսական կապերի վրա և միաժամանակ անդրադարձնում Ռուսաստանում ու Կովկասում իշխող ազգային, սոցիալական ու քաղաքական հակասությունները։ Մեր մանկության ու պատանեկության տարիներին այդտեղ արդեն իսկ առկա էին այն խմբավորումները, որոնք լիցք ու ուղղություն էին տալիս մեր սերնդի զարգացմանը»[2]։

1897 թ. Աշ. Հովհաննիսյանն ընդունվել է Շուշիի ռեալական ուսումնարանը, որն ավարտել է 1906 թ.։ Այդ ուսումնարանի բարձր դասարանցիները աշխույժ կերպով քննարկում էին երկրում տեղի ունեցող իրադարձությունները, առավելապես գտնվում էին «Արևմտյան Հայաստանի ազատագրման գաղափարով տարված հնչակյան ու դաշնակցական կուսակցությունների ազդեցության տակ... Մինչև ինքնամական թվականների կեսերը «երկիրը» մեկնող շուշեցի երիտասարդների մեջ աչքի էին ընկել Գարրիել Կաֆյանի պրոպագանդիստական գործունեությունը և, մանավանդ, մարտերում նահատակված Բարսեղ Ջաքարյանի ու Մարտիկ Սարուխանյանի սխրանքները»[3]։

Բայց Շուշիի երիտասարդության միջավայրից ծնունդ առավ նաև բոլշևիկ հեղափոխականների մի ամբողջ համաստեղություն, որոնք հարազատ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրումը կապում էին ռուսաստանյան հեղափոխության հեռանկարների հետ։ Նրանց թվին էին պատկանում Բոգդան Կնունյանցը, Սլավա Կասպարովը, Ալեքսանդր Բեկզադյանը, Սաքո Համբարձումյանը, Սահակ Տեր-Գաբրիելյանը, Իսահակ Դովլաթյանը, որոնցից շատերի հետ Աշ. Հովհաննիսյանին վիճակվեց աշխատել հետագայում, Սովետական Հայաստանի կազմավորման ժամանակ։

Աշոտ Հովհաննիսյանի հասարակական հետաքրքրությունների ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեցան հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման կապակցությամբ հայ ժողովրդական զանգվածների լայն արձագանք գտած հակացարական ելույթները, ռուսաստանյան առաջին հեղափոխությունը, Շուշիում ստացվող մարքսիստական գրականությունը և բոլշևիկյան մամուլը։ Հենց այդ տարիներին Հովհաննիսյանը ծանոթանում է մարքսիզմի հիմնադիրների երկերին, կարդում է Գ. Վ. Պլեխանովի աշխատությունները։ «Լենինի գործերը մեզ մատչելի դարձան ավելի ուշ՝ մեր ուսանողության տարիներին,—գրել է նա հետագայում։—Հիշում եմ, սակայն, որ նրա երկերից մեկը տեսա դեռ դպրոցի նախավերջին դասարանում։ Ես ու Կասպարովը նստում էինք վերջին նստարանին։ Ռուսաց լեզվի դասի ժամանակ Սլավան ծնկի վրա թերթում էր ստվար մի հատոր։ Դա Լենինի «Развитие капитализма в России» նշանավոր գիրքն էր, որը լույս էր տեսել «Վ. Իլյին» կեղծանունով»[4]։

1905 թ. գարնանը, ռուսաստանյան առաջին հեղափոխության վերելքի ժամանակաշրջանի իրադարձությունների ազդեցության տակ, տեղի ունեցավ Շուշիի ռեալական ուսումնարանի սովորողների գործադուլը, որի կազմակերպ-

---

2 Աշոտ Հովհաննիսյան. Հուշեր և բնութագրումներ. Երևան, 1969, էջ 76։

3 Նույն տեղում, էջ 77—78։

4 Նույն տեղում, էջ 79։

ման ու ղեկավարման գործում առաջատար դեր էին խաղում սոցիալ-դեմոկրատները։ Երիտասարդության այդ ելույթին մասնակցելը եղավ Աշ. Հովհաննիսյանի հեղափոխական մկրտությունը։

Ռեալական ուսումնարանում սովորելու տարիներին Աշ. Հովհաննիսյանի մոտ հետաքրքրություն առաջացավ հայ ժողովրդի պատմության և մշակույթի հարցերի նկատմամբ։ «Չորրորդ դասարանի աշակերտ էի, երբ հափշտակությամբ կարդում էի Րաֆֆու և Լեոյի գրվածքները,— հիշում էր Աշ. Հովհաննիսյանը։— Շատ հավանեցի վերջինիս «Հայկական տպագրությունը», որի ազդեցությամբ ընկա Эзов-ի նշանավոր ռուսերեն ժողովածուի հետքի վրա։ Վերջինիս մտառու ուսումնասիրությունը հետագայում ինձ մղում տվեց գրելու իմ համալսարանական դիսերտացիան»[5]։ Հարազատ ժողովրդի պատմության և մշակույթի նկատմամբ ունեցած հետաքրքրությունը ժամանակավորապես ընդհատվեց։ Շուշիի ռեալական ուսումնարանը ավարտելուց հետո Հովհաննիսյանը մեկնեց Գերմանիա, որտեղ 1906 թ. աշնանն ընդունվեց Ենայի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը։ Լավագույն պրոֆեսորների սեմինարներում պարապելու ձգտումը նրան դրդեց այնուհետև դառնալու Հալեի և Մյունխենի համալսարանների ունկնդիր, որտեղ նա մասնագիտանում էր միջին դարերի պատմության ու փիլիսոփայության ուղղությամբ։

Գերմանիայում գտնվելու տարիները լի էին ոչ միայն ակադեմիական լարված պարապմունքներով. Ենայի համալսարանում ուսանելու հենց առաջին ամիսներին սերտ կապեր հաստատելով Գերմանիայում սովորող ռուսաստանյան ուսանողների սոցիալ-դեմոկրատական կազմակերպության հետ, Աշոտ Հովհաննիսյանը շուտով ըմբռնեց ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատիայի բոլշևիկյան և մենշևիկյան ուղղությունների միջև եղած հակասությունների էությունը և ընտրություն կատարեց՝ հաստատորեն կանգնելով Լենինի կողմնակիցների դիրքերում։ Հաջորդ տարվա գարնանը նա մեկնեց Սպոլգո քաղաքը, որտեղ ռայխստագի ընտրությունների առթիվ ծավալված կամպանիայի կապակցությամբ պետք է հանդես գար գերմանական սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդներից մեկը՝ Ավգուստ Բեբելը։ Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի կրտսեր ժամանակակցի հռետորական արվեստը մեծ տպավորություն գործեց երիտասարդ մարքսիստի վրա։ Ամառային արձակուրդի ժամանակ վերադառնալով հայրենի Շուշի, Հովհաննիսյանը իր ընկերներին պատմում էր ՌՍԴԲԿ արտասահմանյան կազմակերպությունների գործունեության մասին, այն մասին, թե բոլշևիկները ինչպես էին գնահատում ռուսաստանյան առաջին հեղափոխության դասերը և հետագա պայքարի հեռանկարները։

---

5 Նույն տեղում, էջ 80։

Ավարտելով ուսումը և, ինչպես արդեն նշվել է, ստանալով փիլիսոփայության դոկտորի աստիճան, Աշ. Հովհաննիսյանը 1913 թ. վերադարձավ Շուշի։ Այստեղ նա մեկ ուսումնական տարի տեղի հոգևոր սեմինարիայում դասավանդում էր պատմություն և գերմաներեն լեզու, իսկ այնուհետև հրավիրվեց էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարան, որտեղ 1914—1917 թթ. դասավանդում էր ընդհանուր պատմություն, քաղաքատնտեսություն, գերմաներեն լեզու և լատիներեն։ Այդ նույն տարիներին Հովհաննիսյանը շարունակում էր հեղափոխական ակտիվ գործունեությունը. շուտով նա ստեղծեց մարքսիստական խմբակ, որի մեջ մտնում էին ճեմարանի ունկնդիրներ Ա. Միկոյանը, Ա. Ստամբոլցյանը, Ա. Շահգելդյանը և ուրիշներ։ Խմբակը Թիֆլիսից ու Բաքվից ստանում էր հեղափոխական գրականություն և տարածում սովորողների շրջանում[5]։

Փետրվարյան հեղափոխությունից հետո Աշոտ Հովհաննիսյանը վերադարձավ Շուշի, որտեղ խմբագրում էր բոլշևիկյան «Նեցուկ» թերթը, որին աշխատակցում էին Ալ. Ծատուրյանը (Ռուբենի), Ա. Բեջանյանը (Կամարի), Աշոտ Հովհաննիսյանի ավագ եղբայր Հակոբ Հովհաննիսյանը և ուրիշներ։

Աշ. Հովհաննիսյանի հեղափոխական գործունեության հաջորդ փուլը կապված է Բաքվի կոմունայի հետ։ 1918 թ. սկզբից գտնվելով Բաքվում, նա ղեկավարում էր Բաքվի սովետի կուլտուր-լուսավորական բաժինը, իսկ այնուհետև՝ ընդհուպ մինչև Բաքվում սովետական իշխանության ժամանակավոր անկումը, աշխատում էր Բաքվի կոմունայի լուսավորության կոմիսարիատում, վարելով նրա դպրոցական բաժինը։ Միաժամանակ նա խմբագրում էր այստեղ հրատարակվող բոլշևիկյան «Բանվորի խոսք» թերթը։

Բաքվի կոմունայի անկումից հետո Աշ. Հովհաննիսյանը տեղափոխվեց Մոսկվա, որտեղ ղեկավարում էր ազգությունների ժողկոմատի հայկական գործերի կոմիսարիատի գրական-հրատարակչական բաժինը, իսկ ավելի ուշ՝ Սովետական Ռուսաստանի լուսավորության ժողովրդական կոմիսարիատի հայկական սեկտորը։ Միևնույն ժամանակ հայ ժողովրդի պատմության վերաբերյալ դասախոսություններ կարդալու համար նա հրավիրվեց արևելյան լեզուների Լաղարյան վերակառուցված ինստիտուտը, որտեղ աշխատում էին նաև արդեն այն ժամանակ ճանաչված արևելագետներ Ն. Յա. Մառը, Նիկողայոս Ադոնցը, Հովսեփ Օրբելին։

1920 թ. մայիսին Աշ. Հովհաննիսյանն ընդգրկվեց Սովետական Ռուսաստանի պատվիրակության կազմի մեջ, որը բանակցություններ էր վարում Հայաստանի դաշնակցական կառավարության պատվիրակության հետ նախ Թիֆլիսում, իսկ այնուհետև Երևանում։ Մի քանի տասնամյակ անց նա հրապարակեց իր հիշողությունները այդ բանակցությունների ընթացքի մասին, համոզիչ կերպով ցույց տալով, որ դաշնակցական կառավարության անհեռատես քաղաքականությունը, նրա հակասովետական դիրքորոշումը և բանակցությունները փակուղի մտցնելու ձգտումը թանկ նստեցին հայ ժողովրդի վրա, նրան պատճառեցին զգալի տերիտորիալ կորուստներ[7]։

1920 թ. նոյեմբերին, երբ Հայաստանում հաղթանակեց սովետական իշխանությունը, Աշ. Հովհաննիսյանը գտնվում էր Երևանում, որտեղ նա Հայաստանում Բորիս Լեգրանի գլխավորած ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցչության ինֆորմացիոն բաժնի վարիչն էր։

* * *

Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո Աշոտ Հովհաննիսյանի կյանքում սկսվեց նոր փուլ՝ նա ամբողջությամբ նվիրվեց-

---

6 Տե՛ս Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր. Երևան, 1963, էջ 174։

7 Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան. Վերհիշումներ Հայաստանի սովետացման նախապատմությունից.—«Լենինյան ուղիով», 1970, № 11, էջ 35—43։

պետական և կուսակցական բեղմնավոր գործունեությանը, որը հաջողությամբ զուգակցվում էր գիտական և դասախոսական աշխատանքի հետ։

Երբ 1920 թ. նոյեմբերին ստեղծվեցին երիտասարդ Սովետական Հայաստանի առաջին ժողովրդական կոմիսարիատները, Աշ. Հովհաննիսյանին հանձնարարվեց գլխավորել դրանցից մեկը՝ լուսավորության ժողկոմատը։ Այդ ժողկոմատի գործունեությունը չէր սահմանափակվում ժողովրդական կրթության գործի ղեկավարմամբ. այն զգալիորեն ավելի լայն էր, իր մեջ ներառնում էր քաղաքական լուսավորության, հրատարակչության, գրականության, արվեստի և այլ գործերի ղեկավարումը։ Հայաստանի Հեղկոմը (նախագահ Ս. Կասյան), այդ պաշտոնում նշանակելով Աշ. Հովհաննիսյանին, անշուշտ, հաշվի էր առել նրա խոր գիտելիքները հայ ժողովրդի պատմության և մշակույթի ասպարեզում, վիթխարի էրուդիցիան, ՌՍՖՍՀ կուլտուր-լուսավորական հիմնարկություններում կատարած աշխատանքի փորձը։ Սովետական Հայաստանի լուսավորության ժողկոմի պաշտոնում Աշ. Հովհաննիսյանի ծավալած գործունեության հետ կապված է մի շարք կարևորագույն դեկրետների ու որոշումների ընդունումը, այնպիսի միջոցառումների իրականացումը, որոնք ամրողջությամբ վերցրած նշանավորեցին հայ ժողովրդի սոցիալիստական մշակույթի ձևավորումը։ Սովետական իշխանության առաջին իսկ ամիսներին նրա անմիջական մասնակցությամբ մշակվեցին և ընդունվեցին Հայաստանի Հեղկոմի, այնուհետև Ժողովրդական կոմիսարների խորհրդի դեկրետները հայոց լեզուն հանրապետության պետական լեզու ճանաչելու, եկեղեցին պետությունից և դպրոցը եկեղեցուց անջատելու, հոգևոր գերատեսչություններին պատկանած կուլտուր-լուսավորական հիմնարկությունները ազգայնացնելու, բնակչության անգրագիտությունը վերացնելու, պետական հրատարակչություն կազմակերպելու, գրականության և արվեստի աշխատողներին նյութապես ապահովելու մասին[8], լուսավորության ժողովրդական կոմիսարիատի հրամանները մշակութային և լուսավորական գործի վերակազմման, դպրոցի վերակառուցման, Երևանի համալսարանի կազմակերպման, կուլտուր-պատմական ինստիտուտի ստեղծման մասին[9]։ Լուսավորության ժողովրդական կոմիսարը մեծ ուշադրություն էր նվիրում գիտության, տեխնիկայի, գրականության և արվեստի աշքի ընկնող հայ գործիչներին հանրապետություն հրավիրելու կարևոր նախաձեռնությունը, որոնց գիտելիքները և փորձը պետք էին երկրում սկսված վերածննդի գործին։ Հայաստանի Հեղկոմի հանձնարարությամբ Հովհաննիսյանը ականավոր պատմաբան Հակոբ Մանանդյանին առաջարկեց ստանձնել հենց նոր ստեղծված Երևանի համալսարանի ռեկտորի պաշտոնը, իսկ հանրապետության ժողկոմխորհի նախագահ Ա. Ֆ. Մյասնիկյանի հանձնարարությամբ նամակ գրեց բազմավաստակ լեզվաբան Հրաչյա Աճառյանին՝ նրան առաջարկելով վերադառնալ Հայաստան և աշխատանքի անցնել համալսարանում[10]։ Նա աջակցեց նաև շատ մասնագետների՝ տեխնիկական մտավորականության ներկայացուցիչների, դերասանների, նկարիչների Հայաստան տեղափոխվելուն, հոգ էր տանում նրանց աշխատանքի տեղավորելու, հանրապետությունում սկսված սոցիալիստական շինարարությանը հաղորդակից դարձնելու մասին։ Աշ. Հովհաննիսյանը, լինելով լուսավորության ժողկոմ, իսկ այնուհետև Հայաստանի Կ(ր)Կ Կենտկոմի գլխավոր քարտուղար, հատուկ ուշադրություն էր նվիրում հայ հին մտավորականության առավել մեծաթիվ ջոկատին՝ ուսուցչությանը սովետական իշխանության կողմը ներգրավելուն։ 1920-ական թթ. սկզբի իր ելույթներում և հոդվածներում նա ընդգծում էր, որ հայ ուսուցչության դիրքավորումից, սովետական իշխանության

---

8 Տե՛ս Культурное строительство в Советской Армении (1920—1940 гг.). Документы и материалы.—Вестник архивов Армении, 1974, № 2, док. №№ 2, 3, 51, 87, 115.

9 Տե՛ս նույն տեղում, վավ. №№ 4, 26, 64, 65, 85։

10 Տե՛ս «Թանբեր Հայաստանի գիտության ինստիտուտի», 1922, էջ 322։

նկատմամբ նրա վերաբերմունքից շատ բանով կախված է սոցիալիստական շինարարության հաջողությունը, հանրապետության ապագան, գոհունակությամբ նշում էր, որ Հայաստանի ուսուցչությունը ճնշող մեծամասնությամբ ճիշտ է գնահատել սովետական իշխանության քաղաքականությունը, պատրաստակամություն է դրսևորել ազնվորեն ծառայելու հարազատ ժողովրդի լուսավորության գործին։ Հանդես գալով ուսուցիչների համահայաստանյան առաջին համագումարում (1924 թ.), Աշոտ Հովհաննիսյանը հայտարարեց, որ Հայաստանի ուսուցչությունը վերջնական շրջադարձ է կատարել սովետական իշխանության կողմը[11]։

1922 թ. հունվարին Աշոտ Հովհաննիսյանն ընտրվեց Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար։ Այդ պատասխանատու պոստում նա մնաց մինչև 1927 թ. հուլիսը։ Հեղափոխական վերափոխությունների պաթոսով հագեցված այդ ժամանակը երիտասարդ սովետական հանրապետության համար քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնման, նորանոր ճյուղերի ստեղծման, ամբողջ կենսաձևում և հասարակական գիտակցության մեջ կատարվող խոր տեղաշարժերի ժամանակ էր։ Յուրաքանչյուր նոր ձեռնարկության գործարկումը, ոռոգման նոր ջրանցքի շահագործման հանձնելը, յուրաքանչյուր դպրոցի ու բանֆակի բացումը, յուրաքանչյուր բեմադրություն նորաստեղծ հայկական պետական թատրոնում հասարակական լայն արձագանք էին գտնում, առաջ էին բերում աշխատավորների անկեղծ խանդավառությունը։ Այդ բոլոր գործերում կար հանրապետության կուսակցական կազմակերպությունը գլխավորող Աշոտ Հովհաննիսյանի եռանդի ու ջանքերի զգալի բաժինը։ Այդ տարիներին նրան վիճակվել է աշխատել այնպիսի նշանավոր գործիչների հետ, ինչպես Սարդիս Կասյանը, Ալեքսանդր Մյասնիկյանը, Սարգիս Լուկաշինը, Ասքանազ Մռավյանը և ուրիշներ, որոնց պայծառ հիշատակը նա պահպանեց մինչև իր վերջին օրերը և որոնց կենդանի կերպարը վերակերտեց իր հետաքրքիր հուշագրություններում։

Բայց այդ լարված, աշխատանքային առօրյայով առավելագույն չափով հագեցված տարիներին ևս Աշ. Հովհաննիսյանը շարունակում է գիտական և դասախոսական գործունեությունը։ Լինելով Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր, նա լենինիզմի և հայ ժողովրդի պատմության վերաբերյալ դասախոսություններ է կարդում այնտեղ։ Երբ 1925 թ. հանրապետությունում ստեղծվեց Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտ՝ ակադեմիական տիպի գիտական հիմնարկություն, Աշ. Հովհաննիսյանը պատմաբաններ Հակոբ Մանանդյանի, Լեոյի, Երվանդ Լալայանի, լեզվաբաններ Հրաչյա Աճառյանի, Գրիգոր Ղափանցյանի, գրականագետներ Մանուկ Արեղյանի, Հայկ Գյուլիքեվխյանի, Արսեն Տերտերյանի և ուրիշ աչքի ընկնող հայագետների հետ մեկտեղ հաստատվեց նրա հիմնադիր իսկական անդամների կազմում՝ պատմական-հասարակական բաժնի գծով[12]։

Աշ. Հովհաննիսյանը սովետահայ պատմագրության մեջ առաջինը ձեռնամուխ եղավ Հայաստանի ոչ հեռու անցյալի հեղափոխական իրադարձությունների գիտական իմաստավորմանը։ 1920-ական թթ. մեկը մյուսի հետևից լույս են տեսնում նրա «Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը» (1923 թ.), «Համազգային կրիզիսը» (1925 թ.), մի քանի բրոշյուրներ ու հոդվածներ՝ նվիրված դաշնակցության կուսակցության սոցիալական արմատներին, նրա գործելակերպի քննադատությանը։ Հեղինակը Հայաստանում ծավալված հեղափոխական շարժումը քննության էր առնում կենտրոնում տեղի ունեցած իրադարձությունների համադրումով, ձգտում էր բացահայտել Հայաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղված պայքարի

---

11 Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան. Պրոլետարական հեղափոխությունը և ուսուցչությունը. Երևան, 1925, էջ 13։

12 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 3 փետրվարի 1925։

ընդհանուր օրինաչափությունները։ Դրա հետ մեկտեղ Հովհաննիսյանի նշված աշխատություններում իրենց արտացոլումը գտան այն վիճելի հարցադրումները, որոնք սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարի ժամանակաշրջանում, մասնավորապես 1920 թ. մայիսյան ապստամբության օրերին, Հայաստանի կոմունիստների մեջ եղած տակտիկական տարաձայնությունների արձագանքներն էին։

Այդ նույն տարիներին Աշ. Հովհաննիսյանը շարունակում է մշակել իր նախասիրած պրոբլեմը՝ հայ ժողովրդի ազատագրական շարժման և նրա դաղափարախոսության պատմությունը։ Մասնավորապես, 1921 թ. հրատարակվեց նրա «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը» պատմաքննական հետազոտությունը, որը դարձավ սովետահայ պատմագրության առաջնեկը։ Այնուհետև լույս աշխարհ եկան Խաչատուր Աբովյանին, Հայկական հարցին նվիրված աշխատությունները։ Աստիճանաբար ուրվագծվում էր հետազոտողի մտադրությունը՝ քննության առնել հայ ազատագրական շարժման պատմությունը նրա առաջացման ժամանակից մինչև XIX դարի վերջը։ Բայց իր մտադրությունը իրականացնել Աշ. Հովհաննիսյանը կարողացավ միայն տասնամյակներ անց։

1920-ական թթ. վերջին Աշ. Հովհաննիսյանը ամբողջությամբ նվիրվում է գիտական աշխատանքի։ Մի քանի տարի շարունակ նա աշխատում է Մոսկվայում, ղեկավարելով մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի, այնուհետև՝ ՍՍՀՄ աղգությունների ինստիտուտի բաժիններից մեկը, հանդիսանալով նյութական կուլտուրայի պատմության պետական ակադեմիայի (ГАИМК) մոսկովյան բաժանմունքի դիրեկտորը, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալը։ 1937 թ., անձի պաշտամունքի ժամանակաշրջանի անօրինական բռնությունների պայմաններում, Աշ. Հովհաննիսյանը ձերբակալվեց։ Ստեղծագործական ակտիվ գործունեության նա վերադարձավ լոկ 1950-ական թթ. կեսերին։ 1954 թ. մինչև կյանքի վերջը (1972 թ. հունիս) նա աշխատում էր Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում նախ որպես ավագ գիտական աշխատակից, իսկ 1961 թ.՝ որպես նոր պատմության բաժնի վարիչ։ 1960 թ. Աշ. Հովհաննիսյանն ընտրվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս։

Հարկ է նշել, որ Հովհաննիսյանի 1920—1930 թթ. հրապարակած աշխատությունների վրա զգալի է իր ժամանակի գռեհիկ-սոցիոլոգիական «տեսության» և, մասնավորապես, Մ. Ն. Պոկրովսկու դպրոցի ազդեցությունը։ Այդ է պատճառը, որ մեր հեղինակի այդ ժամանակաշրջանում գրված աշխատություններն ունեն մի շարք անընդունելի տեսակետներ։

Խիստ բեղմնավոր էին մեծավաստակ գիտնականի կյանքի վերջին երկու տասնամյակները։ Խոր գիտելիքները, հազվադեպ աշխատասիրությունը, վաղուց հղացած մտադրությունները իրականացնելու ձգտումը Աշոտ Հովհաննիսյանին թույլ տվեցին մի քանի տարվա ընթացքում ստեղծել այնպիսի կապիտալ հետազոտություններ, որոնք հաստատուն կերպով մտան սովետահայ պատմական գիտության ոսկե ֆոնդը։ Թվում էր, թե պատմաբանը ջանում է լրացնել այն բաց տեղը, որ ստեղծել էին հարկադրական լռության տարիները։ Սովորաբար, գնահատելով Աշ. Հովհաննիսյանի գիտական ժառանգությունը, նշում են նրա ստեղծագործության առանցքը հանդիսացող երկու հիմնական պրոբլեմ՝ հայ ազատագրական մտքի պատմությունը և Միքայել Նալբանդյանի կյանքն ու գործունեությունը։ Սակայն ըստ էության Մ. Նալբանդյանին նվիրված աշխատությունները նույնպես օրգանապես ներգրավում են հայ ազատագրական մտքի պատմության պրոբլեմի մեջ։

Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության հետազոտմանը Աշ. Հովհաննիսյանը առաջին անգամ դիմել է դեռևս 1930-ական թթ.։ 1935 թ. նրա խմբագրությամբ լույս տեսան Մ. Նալբանդյանի «Անտիպ երկերը»։ Աշ. Հովհաննիսյանը գրեց հանգամանալից ներածություն և մանրամասն մեկնաբա-

նություններ։ Օգտագործելով Մոսկվայի և Լենինգրադի արխիվներում հայտնաբերած զգալի քանակությամբ փաստագրական նյութ, նա լուսաբանել է մեծ հեղափոխական-դեմոկրատի կյանքն ու գործունեությունը, այն ցույց տալով ռուսաստանյան իրականության լայն ֆոնի վրա, որի պայմաններում և ազդեցությամբ ձևավորվել է Մ. Նալբանդյանի աշխարհայացքը, հարազատ ժողովրդի սոցիալական ազատագրման ուղիների նրա ընկալումը։ Այդ հետազոտությունը սկիզբ դրեց սովետահայ նալբանդյանագիտությանը։

1950-ական թթ. սկզբին գիտնականը հրապարակեց Մ. Նալբանդյանի ստեղծագործությանը և աշխարհայացքին նվիրված մի քանի հոդված և, վերջապես, 1955—1956 թթ. լույս տեսավ նրա «Նալբանդյանը և նրա ժամանակը» երկհատորանոց հիմնարար մենագրությունը։

Այդ աշխատության լույս տեսնելու ժամանակից անցել է երեք տասնամյակ։ Այդ ժամանակաընթացքում նալբանդյանագիտությունը կանգ չի առել տեղում։ Հետազոտողների՝ պատմաբանների ու գրականագետների կողմից հայտնաբերվել են մի շարք նոր փաստեր, ուշագրավ մանրամասնություններ, որոնք հարստացրել են մեր գիտելիքները Նալբանդյանի և նրա դարաշրջանի մասին։ Սակայն Աշ. Հովհաննիսյանի աշխատության անանցողիկ նշանակությունը կայանում է նրանում, որ այն նշել է նալբանդյանագիտության զարգացման հիմնական ուղղությունները։ Դա, նախ, այն գործոնների վերլուծությունն է, որոնց ազդեցության տակ ձևավորվել է Միքայել Նալբանդյանի հասարակական իդեալը՝ հեղափոխական իրադրությունը Ռուսաստանում, Նալբանդյանի կապերը «լոնդոնյան պրոպագանդիստների» հետ և այլն։ Երկրորդ, դա Միքայել Նալբանդյանի դերի բացահայտումն է որպես հասարակական գործչի, որը հանդես էր գալիս արևմտահայերի ազգային ազատագրական շարժումը արևելահայերի սոցիալական և ազգային պայքարի հետ զուգակցելու օգտին, կոնկրետ քայլեր էր ձեռնարկում արևելահայ և արևմտահայ դեմոկրատիայի միջև կապեր հաստատելու ուղղությամբ։ Հովհաննիսյանի մենագրության մեջ տրված է XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական-քաղաքական կյանքի պատկերը նրա բոլոր կեռագծերով ու հակասություններով, հասարակական զանազան հոսանքներով՝ հայ ժողովրդին հուզող հիմնական հարցերին նրանց տարբեր մոտեցմամբ հանդերձ։ Գնահատելով Միքայել Նալբանդյանի՝ որպես հայ հեղափոխական դեմոկրատիայի առաջնորդի դերը, հեղինակը հատկապես ընդգծում էր նրա գաղափարական մերձավորությունը Գերցենի և Օգարյովի հետ, դրանով իսկ հերքելով 1940-ական թթ. վերջի—1950-ական թթ. սկզբի գաղափարական վիճաբանությունների ընթացքում ձեռնարկված փորձերը՝ անտեսելու Նալբանդյանի գաղափարական կապերը Գերցենի հետ և որպես նրա գաղափարակից ճանաչելու միայն Չեռնիշևսկուն։ Պետք է նշել, որ Նալբանդյանի մասին այդ աշխատության մեջ Աշ. Հովհաննիսյանը վերանայել էր ավելի վաղ, մասնավորապես «Անտիպ երկերի» մեկնաբանություններում տրված իր սեփական գնահատումները։ Դա ամենից առաջ վերաբերում է Ս. Նազարյանցին, որը «Անտիպ երկերում» ճանաչվում էր սոսկ որպես հետադիմական գործիչ։ Մենագրության մեջ Ս. Նազարյանցը ներկայացվում է որպես բուրժուական առաջավոր մտածող, որը առաջադիմական դեր էր խաղացել XIX դարի 60-ական թթ. հայ հասարակական կյանքում, բայց մնացել էր բուրժուական լիբերալիզմի չափավոր շրջանակների մեջ։ Գնահատելով Ռ. Պատկանյանին, Հովհաննիսյանը, ի տարբերություն ավելի վաղ հայտնած կարծիքի, այժմ շեշտել է բանաստեղծի ստեղծագործության հայրենասիրական կողմը, ցույց է տվել արևելահայ դեմոկրատիայի ընդերքում ծնունդ առած ազգային-քաղաքական պահանջների ըմբռնումը նրա կողմից։ Այս կապակցությամբ նշենք, որ Հովհաննիսյանը լիովին հետևում էր իսկական գիտնականին հատուկ սկզբունքին՝ նա լրջորեն էր վերաբերվում իր ընդդիմախոսների փաստարկներին և, ստուգելով ու համոզվելով դրանց հիմնավորվածության մեջ, ընդունում էր նրանց իրավացիությունը։

Աշ. Հովհաննիսյանը «Նալբանդյանը և նրա ժամանակը» համարում էր իր վավերագրային աշխատությունը, ցանկանում էր, որ մենագրությունը թարգման-

վի ռուսերեն։ Մահից քիչ առաջ նա վիթխարի աշխատանք կատարեց՝ մենագրության երկու հատորը կրճատեց, այն հասցնելով մեկ հատորի ծավալին, միաժամանակ մտցնելով լրացումներ և ուղղումներ, և աշխատությունը նախապատրաստեց ռուսերեն լեզվով թարգմանության համար։ Սակայն գիտնականի ցանկությունը մինչև այժմ չի իրականացվել։

1957 և 1959 թթ. հրատարակվեց Աշ. Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» մենագրությունը երկու հատորով։ Հեղինակը հեռևյալ կերպ էր բնորոշել այդ հետազոտության խնդիրը. «Դրվագների ընդհանուր առանցքը կազմում է այն փաստերի ուսումնասիրությունը, որոնցով նախապատրաստվել ու սկզբնավորել է իր ազատագրման համար պայքարող հայ ժողովրդի քաղաքական շրջադարձը դեպի Ռուսաստանը։ Պարզել այդ շրջադարձի պատմական հանգամանքներն ու իմաստը՝ այս է մեր դրվագների կարևորագույն խնդիրը»[13]։

Լուծելով առաջադրված խնդիրը, հեղինակը օգտագործում է յուրօրինակ եղանակ՝ նա իր ստեղծագործությունը կառուցում է այսպես կոչված «Հայ ազատագրական լեգենդի» շուրջը, որը ծնունդ առնելով IV դարում՝ Ներսես Պարթևի «տեսիլքի» ձևով, հետագա հարյուրամյակներում նոր մեկնակերպեր ստացավ, որոնք արտացոլում էին հայ ժողովրդի ակնկալությունները։ Քննության առնելով այդ լեգենդի այս կամ այն մեկնակերպի սոցիալական և քաղաքական բովանդակությունը, ճշգրտելով նրա ի հայտ գալու ժամանակն ու տեղը, հեղինակը որոշում է այն պատմական միջավայրը, որի տրամադրությունները արտացոլված են լեգենդում։ Մենագրության մեջ համոզիչ կերպով ցույց է տրված, որ պատմական իրադրության մեջ կամ հայ ազատագրական շարժման սոցիալական հիմքում կատարված յուրաքանչյուր, ավելի կամ պակաս էական ու երկարատև փոփոխություն, վերջին հաշվով, իր արտացոլումն է գտել հայ ազատագրական լեգենդի համապատասխան խմբագրության մեջ։ Նշելով, որ հակասությունները հայ ժողովրդի ու օտարերկրյա զավթիչների և հայ գյուղացիության ու տիրապետող ֆեոդալների միջև հիմնական հակասություններն էին Հայաստանի միջնադարյան պատմության մեջ, հեղինակը ցույց է տալիս, որ հայ ազատագրական լեգենդում իրենց արտացոլումն են գտել հայ հասարակության հիմնական դասակարգերի քաղաքական ու սոցիալական նկրտումները։

Վերլուծելով բազմազան և տարալեզու սկզբնաղբյուրներում պարունակվող փաստական մեծ նյութը, Աշ. Հովհաննիսյանը հանգում է այն հետևության, որ հայ ժողովրդի պետական անկախության վերականգնման գաղափարը տիրապետող է եղել վիթխարի դարաշրջանի ընթացքում՝ Արշակունիների թագավորության անկումից ընդհուպ մինչև XVII դարի վերջը, երբ ձևավորվեց հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշումը։ Հետազոտության յուրօրինակ կառուցվածքը, վերլուծության խորությունը և դատողությունների համարձակությունը մենագրությունը դարձնում են սովետահայ պատմական գիտության նվաճումներից մեկը։

«Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» մենագրության հետ ուղղորեն առնչվում է Աշ. Հովհաննիսյանի ընդարձակ պատմական ներածականը՝ գրված իր իսկ խմբագրությամբ լույս տեսած «Հայ-ռուսական հարաբերությունները XVIII դարի առաջին երեսնամյակում» խորագիրը կրող վավերագրերի ժողովածուի համար (մասն I, Երևան, 1964, մասն II, Երևան, 1967, ռուսերեն)։

Ներածականում վերլուծվում են հայ-ռուսական հարաբերությունները առևտրական, քաղաքական և ռազմական ասպարեզներում։ Ժողովածուի վավերագրերի և ներածականի կենտրոնական դեմքը Իսրայել Օրին է, որի գործունեության հետ կապված է հայ ազատագրական շարժման ռուսական կողմ-

---

13 Աշոտ Հովհաննիսյան. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. գիրք առաջին. Երևան, 1957, էջ 7։

նորոշման սկզբնավորումը։ Շարունակելով ու ամբողջացնելով տասնամյակներ առաջ սկսած իր պրպտումները Օրու պատմական ծառայության շուրջ, մեծավաստակ գիտնականը ձեռք բերված հսկայական գիտելիքների ու փորձի բարձունքից ավելի հստակորեն է բնութագրում Օրու գործունեությունը, ցույց տալիս նրա քաղաքական հեռատեսությունը՝ ընդգծելով այն կարևոր դրույթը, որ Օրին ձգտում էր «դուրս բերել հայերի ազատագրական պայքարը ազգային պարփակվածության փակուղուց»՝ հայ ժողովրդի ազատագրման հեռանկարները կապելով Անդրկովկասի հարևան ժողովուրդների ազատագրության հետ։ Ներածականի հեղինակը ցույց է տալիս, որ XVIII դարի առաջին երեսնամյակը հանդիսանում է հենց այն ժամանակաշրջանը, երբ ռուսական քաղաքական կողմնորոշումը դադարեց հայ առաջավոր գործիչների գաղափար լինելուց և արձագանք գտավ հայ ժողովրդի լայն զանգվածների գիտակցության մեջ։ Նույն XVIII դարի հայ ժողովրդի ազատագրական պայքարի նշանավոր էջերից մեկի՝ Դավիթ Բեկի ղեկավարությամբ ծավալված շարժման պատմությանն է նվիրված Աշ. Հովհաննիսյանի վերջին երկը՝ «Դավիթ-Բեկի գլխավորած Ղափանի ապստամբությունը» արժեքավոր հոդվածը («Բանբեր Երևանի համալսարանի», 1970, № 1)։

1960-ական թթ. կեսերին Աշ. Հովհաննիսյանը ավարտեց «Ուրվագծեր XIX դարի երկրորդ կեսի արևելահայ հասարակական հոսանքների և ազգային քաղաքական կուսակցությունների պատմության» մենագրությունը։ Այդ համեմատաբար ոչ մեծ աշխատությունը, ըստ հեղինակի մտադրության, պետք է հայ ազատագրական մտքի պատմության շարադրանքը հասցներ մինչև XIX դարի վերջը և լուսաբաներ հայ ազգային քաղաքական կուսակցությունների ձևավորման, նրանց ծնման, գաղափարախոսության և գործելակերպի բարդ հարցերը։ Եթե հաշվի առնենք, որ նշված հարցերի ամբողջությունը մեր պատմագրության մեջ եղել և մնում է առավել քիչ ուսումնասիրված պրոբլեմը, ապա ակնհայտ կդառնա ականավոր մարքսիստ հետազոտողի գրչին պատկանող աշխատության նշանակությունը։ Բայց Աշ. Հովհաննիսյանի մենագրությունը չհրատարակվեց. իրենց զգացնել տվեցին դոգմատիզմի իներցիան, այն հարցերից խույս տալու ձգտումը, որոնք ունեն ոչ միայն գիտական, այլև քաղաքական հրատապություն։

Սակայն այդ նույն տարիներին Աշ. Հովհաննիսյանը հրապարակեց մի շարք հոդվածներ, որոնք մենագրության հիմնական գլուխների համառոտ շարադրանքն էին՝ «XIX դարի 50—60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները» («Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 4, 1966, № 1), «Արևելահայերի մասնակցությունը Ռուսաստանի ու Անդրկովկասի հեղափոխական շարժումներին (1860—70-ական թթ.)» (Ն. տ. 1968, № 1), «Հնչակյանների կազմավորման գաղափարական արմատները» (Ն. տ., 1968, № 2), «80-ական թվականների առաջին կեսի արևելահայ ազգային նարոդնիկական խմբակները» («Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, № 2) և վերջապես «Արևելահայ լիբերալիզմի և նարոդնիկության ներհակությունները իննսունական թվականների սկզբներին» (Ն. տ., 1969, № 2)։ Այդ հոդվածների սոսկ վերնագրերի թվարկումը թույլ է տալիս պատկերացում կազմել ինչպես մենագրության կառուցվածքի, այնպես էլ հայ ազատագրական շարժման բուն պրոցեսի և նրա գաղափարախոսության մասին՝ XIX դարի 50—60-ական թթ. հասարակական-քաղաքական հոսանքներից, նարոդնիկության երկու փուլերի (հեղափոխական և լիբերալ) միջով դեպի ազգային քաղաքական կուսակցությունների ստեղծումը։

Քննության առնելով հայ ազատագրական մտքի զարգացման պրոցեսը XIX դարի երկրորդ կեսին, Աշ. Հովհաննիսյանը հանգում է կարևոր և ուշագրավ հետևություններ։ Հաստատելով սովետահայ պատմագրության մեջ արդեն առաջ քաշված դրույթը հայ երիտասարդության վրա հեղափոխական նարոդնիկության ազդեցության մասին, պատմաբանը դրա հետ մեկտեղ ցույց տվեց, որ ժողովուրդների ազգամիջյան համերաշխության գաղափարները

ռուսաստանյան նարոդնիկների կողմից չէին ընկալվում այն հետևողականությամբ, որը հատուկ էր նրանց նախորդներին՝ 1860-ական թթ. հեղափոխական-դեմոկրատներին։ Ազգային հարցի նկատմամբ նարոդնիկների ոչ ճիշտ մոտեցումը արտահայտվում էր նաև այն բանում, որ նրանք ազգային հարցը ծրագրային չէին համարում։ Ցարիզմի տապալման համար մղվող պայքարի գործում ազգային հարցի նշանակության այդ չըմբռնելը հող ստեղծեց նացիոնալ-նարոդնիկների կազմակերպությունների առաջացման համար, որոնք առաջին պլան մղեցին ազգային-ազատագրական շարժման հարցը։ Հենց նացիոնալ-նարոդնիկական կազմակերպություններից ծնունդ առած գործիչները վճռական դեր խաղացին հայկական քաղաքական կուսակցություններից առավել ազդեցիկ կուսակցության՝ դաշնակցության ստեղծման, նրա էկլեկտիկ ծրագրի և քաղաքական կուրսի մշակման գործում։ Այսպիսով, տասնամյակներ անց Աշ. Հովհաննիսյանը կրկին անդրադարձավ հայկական ազգային-քաղաքական կուսակցությունների ծագման պրոբլեմի քննությանը, որը նրա հետաքրքրության առարկան էր դարձել դեռևս 1920-ական թթ.։ Այս անգամ պրոբլեմի քննարկումը խարսխվում էր գիտական փաստարկների և հիմնավորումների ամուր հիմքի վրա։ Պետք է նշել, որ հայկական քաղաքական կուսակցությունների դասակարգային էության մասին Աշ. Հովհաննիսյանի տեսակետը համընկնում է այն կարծիքների հետ, որոնք վերջին տարիներին այդ հարցի վերաբերյալ արտահայտվում են սովետական պատմական գրականության մեջ[14]։

Աշոտ Հովհաննիսյանը լայն պրոֆիլի հայագետ էր։ Նրան հավասար չափով հետաքրքրում էին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման, քաղաքական պատմության պրոբլեմները, աղբյուրագիտության և հայ գրականության պատմության հարցերը։ 1955 թ. Ֆրիկի մասին հրատարակված ոչ մեծ հետազոտությունը կարող է ծառայել որպես պատմագրականագիտական վերլուծության նմուշ։ Գիտնականը մասնակցել է հայ-ռուսական հարաբերությունների պատմությանը վերաբերող արխիվային փաստաթղթերի հրապարակմանը, այնպիսի կարևոր աշխատությունների խմբագրմանը, ինչպես բազմահատորանոց «Հայ ժողովրդի պատմությունը» և «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծերը»։ Լայն էրուդիցիան, խոր գիտելիքները, գիտության զարգացման գործում ունեցած մեծ ծառայությունները գիտնականին բերեցին համընդհանուր ճանաչում և վիթխարի հեղինակություն։ Նա իրավամբ հանդիսանում էր սովետահայ պատմական մտքի նահապետը։

Հարյուրամյակը շատ տպավորիչ տարեթիվ է, և այն առանձնապես ղրժվառությամբ է ընկալվում Աշոտ Հովհաննիսյանի վերաբերմամբ, որը հայ պատմաբանների այժմյան ավագ և միջին սերունդների ժամանակակիցն էր։ Հիշողության մեջ կենդանի է նրա բարձրահասակ կերպարանքը, փարթամ ճերմակ մաղերով պսակված գլխի բնորոշ պահվածքը, բանավիճելու յուրաձևությունը։ Հիշարժան են նրա շատ ելույթներ վիճաբանությունների ժամանակ, պատմության և գրականության ինստիտուտների, Մատենադարանի գիտական խորհուրդների նիստերում։

Աշոտ Հովհաննիսյանը միշտ շրջապատված էր մարդկանցով՝ բարեկամներով, գործընկերներով, աշակերտներով։ Ջերմ բարեկամական կապի մեջ էր Ավետիք Իսահակյանի, Մարտիրոս Սարյանի, պատմաբան Մորուս Հասրաթյանի, գրականագետ Կարո Մելիք-Օհանջանյանի, գրող Հրաչյա Քոչարի, պատմաբան և հասարակական գործիչ Արտո Եղիազարյանի և շատ այլ մարդկանց հետ։ Նրա նկատմամբ առանձնահատուկ սեր էր տածում երիտասար-

---

14 *Տե՛ս, օրինակ,* Непролетарские партии и организации национальных районов России в Октябрьской революции и гражданской войне. М., 1980; Непролетарские партии России. Урок истории. М., 1984 *և այլն։*

ռությունը։ Ուշադրությամբ հետևելով գրականությանը, բառացիորեն կլանելով հսկայական քանակությամբ գրքեր, Աշ. Հովհաննիսյանը խորաթափանցորեն նկատում էր երիտասարդ հետազոտողների առաջին հաջողությունները, ինքն էր ծանոթություն փնտրում նրանց հետ, օգնում խորհուրդներով։ Նա բազմաթիվ կարծիքներ և գրախոսություններ է գրել երիտասարդ գիտնականների ձեռագիր աշխատանքների մասին։ Հայտնի են դեպքեր, երբ չբավարարվելով գրախոսվող ձեռագրի սոսկ գնահատմամբ, իր մտքերն էր ներդրում այդ ձեռագրերի մեջ, երբեմն ամբողջ էջերով, գրանց օգտագործումը թողնելով հեղինակի հայեցողությանը։ Լինելով փայլուն բանավիճող, իր գիտողություններում հաճախ կտրուկ, նա կրքով պաշտպանում էր սկզբունքայնությունը և անաչառությունը գիտության մեջ։ Ահա այս բոլոր հատկանիշների ամբողջությունը կերտում էր Աշոտ Հովհաննիսյանի՝ Գիտնականի և Քաղաքացու անմոռաց կերպարը։

Նշելով Աշոտ Հովհաննիսյանի ծննդյան 100-ամյակը, Հայաստանի գիտական հասարակայնությունը պատշաճն է համարում իր փայլուն ներկայացուցիչներից մեկին, որը խոր հետք է թողել հայրենական պատմագրության մեջ։

АШОТ ИОАННИСЯН

(К 100-летию со дня рождения)

Доктор ист. наук К. С. ХУДАВЕРДЯН

Резюме

В статье дан краткий очерк жизни и деятельности маститого ученого-историка, видного партийного и государственного деятеля Ашота Гарегиновича Иоаннисяна (1887—1972).

Вступив в ряды КПСС в 1906 г., Аш. Иоаннисян принимал активное участие в революционном движении, являлся редактором ряда большевистских газет. С установлением в Армении Советской власти Аш. Иоаннисян—на руководящей партийной и государственной работе. Он был первым народным комиссаром просвещения Советской Армении, затем в 1922—1927 гг.—первым секретарем ЦК Компартии Армении. На этих постах Иоаннисян отдал много сил и энергии восстановлению народного хозяйства республики, укреплению советской государственности, становлению социалистической культуры армянского народа. Обладая блестящим историко-философским образованием, полученным в университетах Германии, усвоив лучшие традиции мирового арменоведения и русской историографии, в совершенстве владея марксистско-ленинской методологией, Аш. Иоаннисян стал одним из первых профессиональных историков-марксистов в армянской действительности. Являясь арменоведом широкого профиля, занимаясь историей социально-экономического и политического развития Армении, вопросами источниковедения и истории армянской литературы, Иоаннисян внес громадный вклад в разработку проблемы, ставшей центральной в его творчестве,—истории армянской освободительной мысли. Помимо ряда работ и статей по этой тематике, опубликованных еще до революции, им в 1950-х гг. созданы фундаментальные труды «Очерки истории армянской освободительной мысли» (в двух томах) и «Налбандян и его время» (в двух томах), по праву вошедшие в золотой фонд советского арменоведения. В последние годы жизни Аш. Иоаннисян опубликовал серию статей, посвященных генезису и идеологии армянских национальных политических партий. Лучшие труды академика Академии наук Армянской ССР Аш. Иоаннисяна обладают непреходящим значением, им суждена долгая жизнь.